



ԵՌՌՌՍ



Օ Ր Ա Գ Ի Ր Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն

Թ Ի Ի 15.

1858

Ո. ՀԱՏՈՐ



ՄԱՎԱՐԴ
ԴԱՏԱՊԱՐԿԱՆԵՐ

րեւելեան Հնդկաստանի ընկե-
րութեան «Սգար», անուն գե-
ղեցիկ երեքկայմ նաւն աս ժա-
մանակս հարուստ վաճառքով լե-
ցուած փրկական կղզիներէն ե-
լած էր եւ ուռուցեալ առագաստ-
ներով Պագապիա կ'երթար. իր
բազմաթիւ քաջ նաւաստիներն եւ 18 թնդանօթ-
ները կարող էին զինքը մալայեան ծովահէններէն
պաշտպանել: Սակայն Սամարանկին ծովեղբայրն անց-
նելէն ետքն ալ Դիմորի, Պոռնէյի եւ Չելե-
պեան կղզեաց աւազակներէն վախ չունէր: Բայց
յանկարծ նաւուն պահապանը նշան տուաւ թէ ա-
րեւմտեան կողմը նաւ մը կ'երեւայ: Նաւապետն իր
դիտակը ձեռք առաւ եւ Սիւրգուֆին անունն՝ թէ-
պէտ եւ շատ ցած ձայնիւ արտաբերուեցաւ, նաւուն
մէջ գտնուող ճամբորդաց եւ վաճառականաց մեծ
ահ ու դող պատճառեց: Սգարին քաջ թնդանօթա-
ծիգներն սկսան ցնծալ որ իրենց քաջութիւնը ցու-
ցնելու առիթ մը գտան. անմիջապէս ամէնն ալ
իրենց որոշեալ տեղերը փութացին եւ պատրաս-
տուեցան իրենց դրօշին պատիւը պաշտպանել:

Պրըզոնին մէջ մեծ ցնծութիւն եւ զուարթու-
թիւն կը տիրէր. փրկական կղզիներէն եկող երեք-
կայմ մ'անշուշտ ճշմարիտ գանձատուն մը պիտ'որ
ըլլար: Սիւրգուֆ յարձակման ամէն կարգադրու-
թիւններն անմիջապէս ըրաւ. իր դէմքին վրայ յայտ-
նի կը տեսնուէր իր ուրախութիւնն: Ընտանութեամբ
Ռեմոն կոմսին կռնակը զարնելով՝ Տէր կոմս, ըսաւ
անոր, դեռ նաւու մը կարծիքն եւ առնուիլը տե-
սած չէք:

— Ոչ, նաւապետ, պատասխանեց կոմսը տհա-
ճութեան ձեւով մը:

— Լյսօր առիթ պիտ'որ ունենաք այսպիսի
հանդէս մը տեսնելու:

— Չեմ կրնար ձեզմէ ծածկել որ աս բանս
ինձի հաճութիւն չիպատճառեր:

— Բարեկամ, դուք զարմանալի մարդ մըն
էք. չեմ կրնար ըմբռնել թէ ինչ պատճառաւ Պրը-
զոնին իր պարտքը կատարելը ձեզի անհաճոյ պիտ'որ
ըլլայ. եւ կամ մոռցա՞ք որ իմ նաւս պատերազմական
նաւ մըն է:

— Նաւապետ, պատասխանեց Ռեմոն վեհու-
թեամբ մը, ես բարեկամի մը հետ ըրած վիճաբա-
նութիւնս անմիջապէս կը դադրեցնեմ երբ որ տես-
նեմ թէ անիկայ վէճի ժամանակ այլայլելու կը սկը-
սի, վախնալով թէ ան առթով բարեկամս կը կոր-
սնցնեմ: Եթէ կ'ուզէք հանդարտութեամբ իմ խօս-
քերս լսել, ձեզի իմ տհաճութեանս պատճառը ծա-
նուցանեմ:

— Խրաւացի խօսք լսելու ականջս միշտ պա-
տրաստ է:

— Լաւ ուրեմն. նաւապետ դուք ձեզի պարտք
կը համարիք ամէն պատուաւոր վաճառականաց նա-
ւերուն վրայ յարձակիլ եւ անոնց հետ զարնուիլ:
Գիտէք որ այսպիսի նաւերուն մէջ շատ ճամբորդ-
ներ եւ ընտանիք կը գտնուին՝ որոնք կրնան պատե-
րազմին մէջ փնսսուիլ: Չէք կրնար աս անմեղաց եւ
մարդկութեան սիրոյն համար գոնէ երբեմն այսպիսի
նաւերը թողուլ որ իրենց ճամբան երթնան:

— Հատ ուրախ եմ ձեր այս աղնուական խոր-
հրդին վրայ. բայց հարկ է որ ես ալ ձեզի իմ
պատճառներս ծանուցանեմ, որոնք զիս կը ստիպեն
աս յարձակումներն ընելու: Նախ եւ յառաջ ես
հոս երեսուն նաւաստիներ ունիմ որոնց ապրուստը
հարկ է հոգալ. բայց ասոնք միայն չեն որ ինձմէ
ապրուստի կը սպասեն. Պենկալայի մէջ շատ ծեր զի-
նուորներ եւ բազմաթիւ ընտանիք կան որոնք պա-
տերազմին պատճառաւ բողբոջին թշուառացած են,
եւ օգնութեան կը կարօտին. Գաղղիա ասոնց աղա-
չանաց ամենեւեմն ականջ չիդներ: Մարդկութեան
սէրը չիպահանջեր որ աս ողորմելիներուն օգնութեան
հասնուի: Ես ասոնց ամենուն թողակ կապած եմ,
բայց աս թողակը միայն անգղիական վաճառականի

նաւերուն աւարէն կրնամ հոգալ: Հիմայ կը հարցընեմ ձեզի, տէր կոմս, պէտք է աս երեքկայսին վրայ յարձակիլ թէ ոչ:

Ռեմոն վեհօթեամբ ոտք ելաւ եւ պատասխանեց. Նաւապետ ես իմ սուրս միշտ ձեր տրամադրութեան տակ ձգած եմ. աս դէպքիս մէջ ալ պատրաստ եմ զանիկայ ձեր ուղածին պէս գործածել, որովհետեւ կը տեսնեմ որ ձեր վախճանն աղնուական եւ պատուաւոր է:

Սիւրբուֆ զուարթութեամբ շնորհակալ եղաւ եւ փութաց իր նաւաստեաց քովն երթալ յարձակման հրամանները տալու համար: Պրըդոն ծովական թռչնոյ մը պէս ծովուն երեսէն սահելով յառաջ կ'երթար. նաւաստիներն այնպիսի հանդարտութեամբ կը գործէին, իբրեւ թէ պարզապէս նաւէն ցամաք ելլալու համար էին իրենց պատրաստութիւններն եւ ոչ թէ մօտաւոր բազմափառ պատերազմի մը համար:

Երկու նաւերն իրարու այնչափ մօտեցած էին որ առանց դիտակի Սգարին ամէն մէկ մասերն յայտնի կ'երեւային. իր կայմերն առաքաստներով ծածկուած էին եւ իր կողերը թնդանօթի պատկառելի շարքեր կը ցուցնէին:

Սիւրբուֆ իր նաւաստիները ժողվեց եւ անոնց ըսաւ. Աս աւարը մերն է. անոր մէկ մասը Պրըդոնի նաւաստիներուն պիտ'որ բաժնուի, իսկ միւս մասը մեր աղքատներուն պիտ'որ ըլլայ. նաւապետն իր բաժնէն կը հրաժարի: Ասոր կը հաճէր:

Իսկոր նաւաստիք ճանկաւոր տապարները վեր վերցուցին եւ միաբերան գոչեցին. Կեցցէ՛ Սիւրբուֆ:

Կեցցէ՛ Գաղղիա, պատասխանեց նաւապետն եւ սկսաւ տալ հարկաւոր հրամանները:

Պրըդոն Սգարին կողը մօտեցած էր. իր նաւաստիներն իրենց ճանկաւոր տապարները ձեռքերնին բռնած երեսի վրայ պառկած էին, միայն Ռեմոն կոմսը նաւուն ծածկին մէջտեղը կը կենար. թնդանօթի եւ հրացանի գնդակներն իր երկու կողմէն շէջելով կ'անցնէին:

— Դամանակն է, պողաց յանկարծ Սիւրբուֆ հնչող ձայնով մը:

Իսկոր նաւաստիք միաբան գետնէն վեր ցաւքեցին. ճանկերն Սգարին կողը նետուեցան. երեսուն քաջ հսկաներ տապարներով եւ ատրճանակներով զինեալ, Սիւրբուֆ իրենց առջեւ, հեղեղի պէս թշնամոյն նաւուն մէջ զեղան. ահագին մորկի պէս իրենց առջեւ եղողը գետին պառկեցուցին եւ զարհուրած նաւավարներուն պողացին. Զէնքերը վար, ապա թէ ոչ ամենքնիդ ալ կը ջարդենք:

Սգարին մէջ կային շատ քաջ մարդիկ՝ որոնք կ'ուզէին մինչեւ վերջին շունչը պատերազմիլ եւ յանկարծական շփոթութենէ մը չվճատիլ, սակայն իրենց քով գտնուած ճամբորդ կանանց ու տղոց լացքն ու վայնասունն ան քաջերուն մեծ արգելք եղաւ. նաեւ անոնց բազմութիւնը նաւուն ծածկին ամէն կողմը լե-

ցուցած ըլլալով՝ պատերազմողաց շարժումները բոլորովն կը խափանէր: Աս պատճառաւ զէնքերը թող տուեցան. Սգար իր յաղթող թշնամոյն անձնատուր եղաւ:

Ենթադրապէս ճանկերն հանուեցան. Պրըդոնին նաւաստիներէն միայն չորս հոգի անոր մէջ դարձան. միւսներն իրենց նաւապետին հետ Սգարին մէջ մնացին եւ զանիկայ դէպ ի Սամարանկ ուղղեցին: Սիւրբուֆ բռնուած նաւուն աւարներէն մեծ կապոց մը շինել տուաւ որ ըստ մեծի մասին կտաւեղէն եւ զգեստի նիւթեր կը բովանդակէր, նաեւ ամէն ծխախոտն, շատ հրադէն եւ ռազմամթեր քանի մ'արկղներու մէջ լեցուց եւ Ռեմոնին դառնալով՝ Ահա, տէր կոմս, ըսաւ իրեն, ձեր աւարամասն: Ասկէ ետքը նաւաստիներուն հրամայեց Սգարին ամենէն մեծ մակըլը վար իջեցնել եւ կարմիր ներկ ու վրձին մը բերել, որոնցմով մակուկին գլխի կողմը մեծ գրերով Աւրորային անունը գրեց եւ Ռեմոնին ըսաւ. Աս ալ իմ կողմանէս Տերբեմոն կոմսուհոյն ընծայ մ'ըլլայ:

Երկու բարեկամք իրարու ձեռքը թօթուելէն եւ հրաժարական ողջոյնը տալէն ետքը կոմսն սկսաւ դէպ ի նաւուն սանդուխը յառաջանալ: Նոյն միջոցին Ալպան Ռըվէ Սիւրբուֆին մօտեցաւ եւ ըսաւ. Տէր նաւապետ, ես ալ հոս գործք չունիմ. հրաման տուէք որ Ռեմոն կոմսին հետ ցամաք երթամ:

— Եւ, բայց նախ քու աւարի բաժինդ առ:

— Նաւապետ զանիկայ սա կայմին կոթընող խեղճ կնոջ տուէք. ես ամէն տեղ հանգիստ կրնամ ապրիլ. միայն կարթ մը եւ հրացան ինձի բաւական է:

— Դուն ծոյլ, բայց մեծասիրտ մարդ մըն ես. քու կամքդ կը կատարեմ. միայն թէ փութաւ. կոմսն արդէն նաւակին մէջն է: Սա երկու մալայեցի աղջիկներն եւ իրենց ծերունի հայրն ալ քեզի հետ առ. իրենք ալ Վանտուզներն գաղթականութեան յաւելուած մը կրնան ըլլալ:

Սիւրբուֆ Ռեմոնին եւ Ալպանին վերջին ողջոյն մ'ալ տուաւ եւ ճանապարհորդք սկսան դէպ ի ցամաք յառաջանալ:

Երեւր մտնելէն ժամ մը յառաջ մակըլին՝ Ալպանին թիավարութեամբ Սամարանկին ծովածոցը մտաւ: Արդէն մեղմ ստուեր մը ծովեղերքը՝ ծածկելու սկսած էր. լեռանց վրայէն անուշահոտ ծաղկանց հոտերով խառնուած քաղցրաշունչ հով մը կը փչէր. բլրոց գագաթները ծիրանի գոյն մ'առած՝ կը շողային. վայրենի բնութիւնն աս ժամանակս վեհ երեւոյթ մ'ունէր:

Ռեմոն մակուկին ետեւի կողմն ոտքի վրայ կեցած՝ ցամաք կը նայէր. իսկզբան բոլոր ծովեղերքն անբնակ եւ անապատ կ'երեւար. բայց բաւական յառաջ երթալէն ետքն երեկոյեան ստուերին մէջ երկու մարդու կերպարանք սկսաւ նշմարուիլ: Ալպան թիակները թող տուաւ, հրացանը ձեռք առաւ, եւ հարցնելու ձեռով մը Ռեմոն կոմսին նայեցաւ:

— Հոն միայն մեր բարեկամները կը բնակին, ըսաւ կոմսը. թիակները ձեռք առ եւ աղէկ թիավարէ որ շուտով մեր տեղն հասնինք:

— Այսպէս հնազանդեցաւ:

Համաքին աւելի մօտենալով՝ Ռեմոն յայտնի ճանչցաւ իր երկու բարեկամները Վանտրուզէնն եւ Սդրիմն՝ որոնք իրենց հրացանները պատրաստ բռնած՝ եկող նաւակը կը դիտէին: Կոմսը զիրենք յանուանէ կանչեց. նոյն միջոցին մակոյկը ցամաք մօտեցաւ եւ երեք բարեկամք ուրախութեամբ զերար ողջունեցին. Այսպէս ծեր Մալայեցւոյն եւ երկու աղջկանց հետ արկղներն ու կապոցները ցամաք հանելու հետ եղան: Առաջին ուրախացումներն ցոյցերէն ետքն Ռեմոն սկսաւ Վանտրուզէնին զանազան հարցումներ ընել եւ իր հեռաւորութեան ժամանակ Սամարանկ պատահած դէպքերուն վրայ տեղեկութիւններ ուղղել:

— Հոս շատ փոփոխութիւններ պիտ'որ տեսնէք պատասխանեց հոլանտացի պատանին. ձեր հեռաւորութեան ժամանակ մեր գաղթականութիւնը շատ աւելցաւ. շէնքերն օրէ օր կը բազմանան եւ քիչ ժամանակուան մէջ մեծ աւան մը պիտ'որ կազմեն:

— Իսկ Աւրորա կոմսուհին, հարցուց նորէն Ռեմոն. ինչպէս է իր վիճակը. շատ ուրախ եմ որ զինքը նորէն պիտ'որ տեսնեմ:

— Խեղճ տիկինը, որչափ ցաւ ու վիշտ կրեց:

— Հիմա ու վիշտ կրեց. աս բանս լսած չէի: Բայց ինչ է իր ցաւոց պատճառը:

— Չլսեցիք որ իր ամուսինը մեռած է:

— Այո, ասիկայ լսած էի:

— Աւ դեռ կը հարցընէք թէ ինչ է իր ցաւոց պատճառը: ... Կոմսուհին քանի մ'օրէ վեր շատ զուարթ էր. գուժականը չէր կրնար իր գոյժը տալու աւելի անյարմար ժամանակ մ'ընտրել:

— Աւրորա իր ծաղիկները կը ջրէր, երբ որ գոյժն հասաւ, ըսաւ Ռեմոն:

— Ի՞նչ կ'ըսէք. ծաղիկները կը ջրէր: Ոչ. ձեզի դէպքն ամբողջ պատմեմ: Կոմսուհին կը քննարկէր որ կ'սրթըննայ, անկողնոյն վրայ նամակ մը կը գտնէ կը բանայ կը կարգայ, ... նամակը Սիւրբուֆին գրածն էր որուն մէջ չոր կերպով մը կը ծանուցանէր թէ Տերբեմոն կոմսն ու թ ամիս յառաջ մեռած է ... Գիտէք որ ծովական մարդիկ չեն կրնար բան մը մեղմ կերպով գրել: Խեղճ տիկինը սաստիկ աղաղակ մը վերցուց՝ որ ոսկրները կը թափանցէր, եւ մարած գետին ինկաւ: Օրիորդներն անմիջապէս իրեն օգնելու փութացին. նոյն օրէն ի վեր խեղճը խցէն դուրս ելած չէ եւ դեռ այսօր առաջին անգամ քիչ մը կերակուր կերաւ:

Կոմսն այս ամենայն լսելու ժամանակ մեծ զարմանք կը ցուցընէր, եւ երբ որ Վանտրուզէն լռեց, ըսաւ անոր.

— Ձեր խօսքերը չեմ կրնար հասկընալ ... նամակն ... անկողինը ...

— Հոս հասկընալու բան չկայ, պատասխանեց

հոլանտացին, ինչիրը շատ պարզ է. Աւգոստա օրիորդը թղթաբերն ընդունեցաւ, նամակն անոր ձեռքէն առաւ եւ Աւրորային անկողնոյն վրայ դրաւ:

— Աւգոստա օրիորդը. նամակն ընդունեցաւ Ո՞վ է Աւգոստա օրիորդը. զինքն ամենեւին չեմ ճանչնար:

Վանտրուզէն փութաց համառօտիւ պատմել Տափիտոնին դէպքերն եւ անոր երկու դուստրներուն Սամարանկ գալը: Նոյն ժամանակն իմացաւ կոմսը թղթաբերին բերած սխալ լուրն ու բանին բուն էութիւնն են որոշեց առաջին առթիւ նաեւ Սիւրբուֆին ծանուցանել: Նոյն իրիկուն կոմսն իր միւս բարեկամներուն հետ կարճ տեսութիւն մ'ըրաւ եւ կանուխ իր խօսքը քաշուեցաւ, իր տաժանելի ճամբորդութիւններուն եւ պատերազմներուն յոգնութենէն հանգչելու համար: Իսկ Աւրորային հետ ընելու առաջին տեսութիւնն երկրորդ առտուան թողուց:

Արեւն իր զուարթարար ճառագայթներովն հորիզոնէն վեր բարձրացած էր. բոլոր գաղթականք սկսած էին նորէն իրենց գործքերուն ղեաղիլ. Աւրորա իր երկու որդեգիրներովն իր վարդաստանն ելած՝ կանացի ձեռագործի մը կը ղեաղէր: Ռեմոն վեհ քալուածքով մը նոյն տեղն եկաւ զկոմսուհին մեծաբանօք ողջունեց եւ մօտաւոր խոսակցէն բաղմոյն վրայ նստաւ: Թէպէտ եւ Աւրորա զինքը տեսնելով նորէն այլալուծիւն մը զգաց, սակայն ինքզինքը շուտով նորէն ժողվելով՝ սկսաւ Դիմորի արշաւանաց վրայ հարցումներ ընել եւ ամենայն ինչ լսելէն ետքը, ջերմութեամբ Ռեմոն կոմսին շնորհակալ եղաւ իր քաջութեան եւ այնպիսի մարդասիրական գործքին համար:

Նոյն օրը կոմսուհին զՌեմոն եւ զՎանտրուզէն առանձին նախաձաշկի մը հրաւիրեց, որուն լմննալէն ետքն հրապարակաւ ծանոց որ ինքն որոշած է իր պրիւլմէան զգեստը բոլոր իր կենաց ժամանակը կրել եւ իր սիրելի ամուսնոյն յիշատակն անմոռաց պահել. եւ թէ անկէ ետքն իր բոլոր փոխն ու ջանքը պիտ'որ ըլլայ իր ամուսնոյն սկսած գործքն յառաջ տանիլ, այսինքն ճափայի մէջ ծաղիկեալ գաղղիական մեծ գաղթականութիւն մը հիմնել, կրթելով Դատապարտելոց գունդն եւ անոնց քրիստոնէական կրօնը սովորեցընելով:

Մնացածը գաւ անգամ:

ԵՐԿՐԻՆ ՔՐԻՄԻԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հարիւր տարի յառաջ քիմիան դեռ շատ քիչերու ծանօթ գիտութիւն մըն էր. այսօրուան օրս Եւրոպայի մէջ նորաձեւութիւն մ'եղած է: Ամեն մարդ վրան կը խօսի, ամեն մարդ կը գովէ զանազան օգուտները, զորոնք մարդկութիւնը քիմիական զօրութիւններէ քաղած է եւ դեռ կը քաղէ: Ոչ որ կրնայ ուրանալ թէ քիմիական զօրութեանց այնչափ

պարտական ենք որչափ մեքենական զորութեանց: Մարդկութիւնը զանոնք կը գործածէ թէ կենաց հարկաւոր եւ թէ շքեղութեան պիտոյքն յագեցնելու: Վայրենին, որն որ իր նետը գուրաւայով կը թուանաւորէ, այնչափ հարկաւորութիւն ունի անոնց, որչափ գիրգ մեծատունը, որուն սրահին օդը ամենաբարակ հոտերով լեցուած է, եւ կամ գեղացին, որն որ աղբերով ու նետած պարարտութիւններով իր արտերուն զորութիւն ու կեանք կու տայ:

Սակայն վերացնենք զմեզ քիմիայի անհամար գործածութիւններէ, զորոնք մարդն իր գոյութենէ վեր կ'ընէ, ընդարձակենք մեր տեսութիւնն ու ետեւ նայինք մինչեւ ան հեռաւոր դարերը, որոնց մէջ դեռ մարդկային էակ մը երկրի վրայ չէր պտտեր: Նոյն ատեններն ալ քիմիական զորութիւններն երկրիս կազմութեան մեծապէս ու էապէս գործակից չէին ըլլար: Դեռ մարդը չգոյացած բնութիւնն իր քիմիական գործանոցին (laboratoire) մէջ անոր համար կ'աշխատէր եւ իր շտեմարաններուն մէջ կազմածներ կը դիզէր, որոնց քովը մարդուն ձեռքէն ելածը չտեսնուելու չափ պզտիկ ու աննշան է:

Նշուինիս երկրին կերպաւորութեան առջի դարուն դարձնենք, երբ որ հրացած հալած գնդին վերին երեսը սառուցեալ կեղեւ մը ծածկեց, երբոր Պղտունին՝ կենդանական կրակին աղբեցութեանը դէմ մեծ պատուար մը քաշուեցաւ եւ գործողութեան ասպարէզը մեղմագոյն վեհապետի մը՝ Նեպտունին, այսինքն՝ ջրոյ թող տրուեցաւ: Ինչպէս գիտենք՝ երկիրն հետզհետէ ջերմութիւնը կորսնցնելով՝ դժուարահալ հողերն, ինչպէս գայլախաղի հողը, կրի հողը, մագնեսեան, կալին եւ այլն, եւ անոնցմէ կազմուած խտաքարը, որձաքարը, միգան, տալին, ամփիպոլը եւ այլն՝ խառն սառեցան եւ իբրեւ կրանիդ, սիէնիդ պորփիւր եւ այլն, նախնական ըսուած կազմութիւնն յառաջ բերին: Աս միազանգուած կարծր ու խորտուբորտ ժայռին վրայ կենդանութեան թիւ օյս կրնար ըլլալ: Կեանքը կարելի ընողը օդի ժանդ ըսուածն է, որն որ մինչեւ հիմա անընդհատ կը գործէ, որն որ հնոց փառաւոր ձեռակերտները կործանած ասպականած ու կարեւոր արձանագրութիւնները չկարգացուելու ըրած է, եւ անոր համար ալ հնախօսներէն միշտ անէծք կ'ընդունի ու ժամանակի ժանիք կ'անուանի: Սակայն ով որ բնութեան աս եղծիչ զորութեան բարի կողմն ալ կը տեսնէ ու կը մտածէ, որ առանց անոր՝ երկիրն ամայի ու անապատ պիտի ըլլար, տունկերը բուսնելու համար հող պիտի չունենային եւ արարչութեան զարդը՝ մարդն ու բոլոր կենդանիներն ամենեւին սնունդ պիտի չգտնէին, ըստ հետեւորդի իրենց գոյութիւնն ալ անկարելի պիտ'որ ըլլար, այնպիսին իր բարեկամական ձեռքը երախտագիտութեամբ աս անհաշտ թշնամւոյն կ'երկնցընէ:

() Գի ժանգը ուրիշ բան չէ, բայց եթէ քարերուն ու մետաղներուն մթնոլորտին մէջ եղած շոգի-

ներուն ու թթուութեանց զորութեամբ փշրիլը, լուծուիլն ու քայքայիլը: Ինք իրեն յայտնի է որ ժանգի աղբեցութիւնն ամենէն յառաջ մակերեւութին վրայ կ'երեւայ: Երկրին առաջին դարուն մթնոլորտը ջրային գոլորշով, ածխոյ թթուով եւ ուրիշ կազերով ու շոգիներով լեցուած օդ մըն էր, որն որ թանձր ամպի մը պէս գունդը կը պատէր: Մտածենք մէջ մը աս ջրով շոգիներն ու թթուները կարծրացած գնդին վերին երեսը կազմող կրանիդի վրայ ինչպիսի անյագութեամբ ինկած, ամէն ծակերուն ու պատուածներուն մէջ մտած ու կրծելով ան քարին կապը անխնայ խզած են: Միւս կողմանէ մթնոլորտն ալ կամաց կամաց պաղելով ու ձգտականութիւնը կորսնցնելով շոգիները թթուներու հետ հեղուկ դարձած գետինը նստեցան ու առջի ծովը կազմեցին, որն որ մթնոլորտէն աւելի մեծ աւեր սկսաւ ընել: Երկրին կեղեւը մոններով խորունկ լուծուած բարակ ցելի մը դարձաւ, որն որ հետզհետէ գիրտի պէս յատակը նստելով նորէն պնդացաւ, բայց ուրիշ կերպարանք առնելով: Աս մթնոլորտին ու ջրին զորութեամբ քարերուն փշրիլը ու փշորները ջրին յատակը նստելով ուրիշ տեսակ քարեր շինելու անընդհատ մինչեւ հիմա կը շարունակուի եւ ասկէց կազմուած են երկրին կարգ կարգ հողերը, զորոնք շատ անգամ լեռներու կամ փոսերու կողերն եւ մանաւանդ քարահատերուն վրայ գոտիներու պէս կը տեսնենք: Զոհն կազմուած կարգ կարգ հողերը Նեպտունեան կ'ըսուին, ինչպէս յառաջագոյն հալած վիճակէն պաղած կարծրացածներն ալ երկրախօսք Պղտունեան կ'անուանեն:

Ստոյգ է որ դիտողին շատ դժուարին է բնութեան ան հեռաւոր դարերուն մէջ ըրածները մանրամասն իմանալ, ասոր համար քարերուն ծագումը մեկնելու համար շատ անգամ ենթադրութիւններու դիմելու կը ստիպուի, որոնք ինչիւր բաւականապէս լուծելը կը լուծեն, բայց թող ալ կու տան որ ուրիշ քննիչներ տարբեր նաեւ հակառակ եղանակաւ ալ մեկնեն: Սակայն ասանկ չէ երկրիս կեղեւին քանի մը մասերուն կերպարանափոխութիւնն ու կազմութիւնը, որն որ ըստ մասին վերջին դարերն եղած է, ըստ մասին դեռ մինչեւ հիմա ալ մեր աչքին առջեւ կ'ըլլայ: Հոս քարը հասարակօրէն իր ծննդեան վիպականը վրան կը կրէ:

Նեպտունեան կարգ կարգ հողերուն կամ լաւ եւս ժայռերուն գլխաւոր բաղկացուցիչ մասունքն են կաւի հողը, միգան, ածխաթթու կիւն ու որձաքարի հատեր, (այսինքն կոպիճ կամ գայլախաղ կամ աւաղ) որոնց ամենը՝ ինչպէս արդէն գիտենք, իրենցմէ վար եղող Պղտունեան ժայռերուն մէջ կը գտնուին, ուստի եւ ասոնցմէ առնուած ու կերպարանափոխ եղած են: Անմիջապէս Վրանիդին վրայ նստող կարգը Կնայսն է, որն որ կրանիդէն ամենեւին տարբերութիւն չունի եւ շատ անգամ անկէց չի կրնար զանազանուիլ: Կրանիդէն ունեցած միակ տարբերու-

Թիւնն աս է, որ թերթ թերթ կը բաժնուի: Ուստի կ'երեւայ որ ջրին խոնաւութիւնը կրանիդին մէջ թափանցած է, կապը խախտած է, բայց խորունկները բոլորովին քայքայած ու քիմիական փոփոխութիւն մ'ըրած չէ: Եւ ինչպէս խոնաւութիւնը միշտ վերին երեսէն սկսելով որչափ խորունկ կ'երթայ այնչափ կը նուազի, մինչեւ անզգալաբար բոլորովին կը կորսուի, ասանկ ալ հոս տեղս անանկ անզգալաբար աներեւոյթ եղած է, որ չկրնար ցուցուիլ թէ ուր տեղս կրանիդը կնայսի կ'անցնի:

Յ ջրին ըրած աւերը վերին երեսն է: Հոս ժայռը բոլորովին քայքայեւէն լուծեւէն ու ցելս դարձնելէն ետեւ՝ մեքենական ու քիմիական զորութեանց ձեռքը բաղադրիչ մասունքն իրարմէ բաժնած եւ ըստ մասին ալ բոլորովին կերպարանափոխ ըրած է: Երբեք ջրի մէջ ամենեւին չլուծուելով, ցելին տակը իբրեւ գիրտ նստած ու կնայսի վրայ (տեղիս տեղիս կրանիդի վրայ ալ) միգայի հերձաքար ըսուած կարգը շինած է: Գայլախաղի հողը ըստ մասին կը լուծուի ըստ մասին ալ, մանաւանդ երբոր մաքուր որձաքար է, անփոփոխ կը մնայ: Գլխաւոր փոփոխութիւն կրողը խտաբարն է, որն որ Պղուտոնեան ժայռերուն մէջ առատութեամբ կը գտնուի եւ իբրեւ հանք ամենէն մեծ խաղը կը խաղայ: Ասիկա գայլախաղաթթու կալիէ կամ կրէ ու գայլախաղաթթու կաւահողէ կազմուած է. ուստի քիմիան կը սորվեցընէ որ, եթէ ասի ածխոյ թթու ունեցող ջրի մը հետ հալորդակցութիւն ունենալու ըլլայ՝ գայլախաղաթթու կալին կամ կիրը կը լուծուի, իսկ գայլախաղաթթու կաւահողն ամբողջ անարատ կը մնայ: Մտածենք Պղուտոնեան ժայռերուն խտաբարը հաղարաւոր տարիներ ածխոյ թթուով լեցուած ծովուն աղբեցութեան տակը. ի հարկէ կամաց կամաց կալին կամ կիրը բոլորովին պիտի բաժնուի ելլէ, ու ածխոյ թթուի հետ միանալով, քիմիական նոր միաւորութիւն մը կազմէ, իսկ գայլախաղաթթուն կամ գայլախաղի հողը կաւի հողին հետ պիտի մնայ: Իրօք ալ ասանկ եղած է: Կաւի հողն առանց նոր քիմիական միաւորութիւն մը կազմելու նախնական ցելին մէջ գտնուած ուրիշ նիւթերու հետ աւելի կամ նուազ խառնուելով՝ յատակը նստած է: Ամենէն յառաջ միգայի հետ խառն յատակը նստած կաւահողը նախնական Կաւի հերձաքար ըսուած կարգը կազմած է, տալիի հետ խառնուածը՝ տալիի հերձաքարի կարգը իսկ գայլախաղի հողին հետ խառն մնացածը՝ գայլախաղի հերձաքարը յառաջ բերած է, որն որ մեղի յախճապակահողը կը մատակարարէ: Ամէն մարդ գիտէ ետքի նիւթին կարեւորութիւնը. եթէ բնութիւնն աս եղանակաւ զան չլուծէր կամ անկէջ զուրկ պիտի մնայինք եւ կամ մենք պիտի հարկադրէինք եղանակաւ մը նոյնը լուծել:

Յայտնի է որ պղտոր ջրի մը, մանաւանդ թէ ցելի մը յատակը ինչած նստած հանքը որչափ որ միւս մասերէն կանուխ ալ նստի, որչափ որ մեծա-

գոյն ծանրութիւն ալ ունենայ, չկրնար միշտ զուտ ու օտար նիւթերէ անխառն ըլլալ, ասոր համար թէ միգայի կարգը եւ թէ կաւի կարգը եւ թէ անկէջ ետքը կազմուած կարգերը՝ կաւով, գայլախաղով եւ կամ, կարճ ըսելու համար, դրացի կարգերուն հողերով աւելի կամ նուազ խառն են. իսկ միգայի, կաւի եւ այլն անունն անոր համար կ'առնուն, որովհետեւ ան նիւթերը նոյն կարգին մէջ տիրող մասունքն են: Եւ ոչ ճշգիւ իրարմէ բաժնուած են, հապա անզգալաբար իրարու կ'անցնին եւ շատ անգամ ալ իրարու հետ կը խառնուին:

Եստաբարէն ինչպէս նաեւ ամփիպոլէն ու ուրիշ հանքերէն բաժնուած ու ածխոյ թթուին հետ միացած կիրն ինչ եղաւ: Երկայն ժամանակ ջրոյ մէջ լուծած կեցաւ, պաղած կամ գաղջացած ծովուն մէջ դեռ նոր շարժելու սկսող ժժմուկներուն պատեան շինելու նիւթ մատակարարեց, եւ երբոր ծովու մէջ լողացող հսկայաձեւ մամուռները ածխոյ թթուն իրենց առնելով ջուրը զտուելու ու լուծողութիւնը կորսնցընելու սկսաւ, ածխոյ թթու կիրն ալ սկսաւ յատակը նստիլ ու կաւի հերձաքարին վրայ նախնական ըսուած կարծր ու ողորկ կիրը կազմել, զորն որ հասարակօրէն մարմոր կամ կուճ կ'անուանենք եւ որն որ մարդուն յարմար նիւթ եղած է վրան իր զարմանալի հանճառն ու արուեստը դրոշմելու: Նոյնպէս խտաբարէն լուծուած կալին ալ ածխոյ թթուին հետ միանալով տնկաղը կազմեց, որն որ տնկոց հարկաւոր սնունդներէն մէկն է:

Աս եղանակաւ նեպտունեան ժայռերու մէջ եղած մէկալ նիւթերն ու քարերը ջրին կամ թթուներուն զորութեամբ լուծուած եւ ետքէն կամ զուտ, կամ ուրիշ նիւթերու հետ միացած եւ կամ քիմիական նոր միաւորութիւն մը կազմելով յատակը նստած նորէն քարացած են: Նեպտունեան հողերուն մէջ գտնուած մետաղահանքերն ալ աս գործողութիւններէն անցած են: Արդէն Պղուտոնեան ժայռերը բաւական մետաղ ունին. ասոնց վրայ ետքէն կենդանի գուրս մըլուածներն ալ աւելցած են: Աս բոլոր մետաղները ժայռերուն քայքայած ատեն կամ խոշոր խոշոր զանգուածներ ըլլալով անմիջապէս ջրին յատակը գացած են եւ կամ թթուներու մանաւանդ ծծմբոյ թթուին հետ շօշափման գալով աղեր կամ արջասպներ կազմած են, որոնք ջրի մէջ լուծուելով՝ ետքէն մրուր եղած ու կարծրացած են:

Մնացածը գաւ անգամ:

Բ Ե Լ Գ Ե Տ Բ Ե Լ Ե

Փողորմութիւն:

Արիայի եւ Ափրիկէի հարաւային կողմերը բնակող աղբերուն գլխաւոր զբաղմանց մէկն ալ փղորութիւնն է որ զանազան տեղ զանազան վախճաններ ունի: Քաջբաւտանցիք զանկայ կ'որսան իր մական համար որ իրենց ախորժեղ

կերակուր մը կը մատակարարէ. միանգամայն իր ժանիքներուն համար զոր Էւրոպացւոյ կը ծախեն. Բարեյուսոյ հրաւանդանին դաղթականները փոսերու մէջ դարանի կը մտնեն եւ իրենց հրացաններն առ յաղթամարմին անապոսոց դէմ կ'արձակեն որպէս զի իրենց արտերն ու կալուածներն անոնց ապականութիւններէն պահպանեն. Հնդկիներն զփիղն իրենց կը հնազանդեցնեն զանոնք իբրեւ բեռնակիր դարաւ ծառայեցնելու համար. Բարեյուսոյ հրաւանդանն եւ Հնդկ-կատան բնակող Անգլիացիներն զանոնք կ'որոպ պարզ զուարճութեան համար: Սակայն առ որսորդութիւնն ինչ կերպով եւ վախճանաւ որ ըլլայ միշտ շատ վտանգաւոր է, ասոր համար փղաբնակ երկիրներ պտըտող ճամբորդներուն դրոյ մէջ փղորութեան շատ քսամներէ դէպքերը կը գտնուին:

Ինչպէս եւ վայրենի ազգերը հասարակօրէն երեք եղանակ ունին փիղ որսալու. այսինքն թանաւոր նետով զանոնք սպաննել. անոնց յաճախած տեղերը փոսեր բանալով՝ որդայթ լարել, եւ անոնց ոտքի ջղերը կտրել: Առաջին երկու կերպերն այնչափ վտանգաւոր չեն. բայց երրորդ կերպ փղորութիւնը մեծ դժուարութիւն ունի եւ շատ ճարպկութիւն ու յաջողակութիւն կ'ուզէ: Ափրիկեցիք՝ որոնց փղի միւր համագամ կերակուր մըն է, հետեւեալ կերպով առանտունը կ'որսան: Երկու մերկ մարդիկ ձի կը հեծնան, երբեմն թամբով, եւ երբեմն առանց թամբի. առաջինը մէկ ձեռքը միայն գաւազան մը կ'առնու, իսկ միւս ձեռքով ձին կը վարէ: Իր ետեւը կը հեծնայ իր միւս ընկերն ասոր զենքն ուրիշ բան չէ բայց եթէ լայն սուր մ'որուն մինչեւ կէտը չուան փաթթուած է, իսկ միւս կէտն անեղոյ պէս որուած: Գաշտի վրայ արածուող փիղ մ'երեւալուն պէս, առ հեծեալը ձին ստատիկ վազընկելով՝ անոր (փղին) առջեւը կ'երթայ եւ կը սկսի պոսալ. Էս այս անուն մարդն եմ, իմ ձիս այսպէս կ'անուանուի. ես սա եւ սա տեղը քու հայրդ սպաննեցի եւ հիմայ զքեզ ալ պիտ'որ սպաննեմ — Ափրիկեցիք կը կարծեն թէ փիղն առ խօսքերը կը հասկընայ — Սակայն փիղն իր անմիջապէս առջեւն եղած ազաղակէն կը գրգռուի, կը կատղի եւ կը ջանայ զհեծեալն իր պատճովը բռնել գետին զարնել. առ մտքը անգաղար ձիուն ետեւէն կը հալածէ, բայց որսորդը ճարտարութեամբ զանկապ կառավարելով՝ կը ջանայ միշտ փղին առջեւը պտըտիլ: Նոյն միջոցին իր ընկերը ձիէն վար կը յատըք, եւ իր սրովը փղին գարշապարին վերի կողմը գրաւուած ջիղը կը կտրէ. առ գործողութեան ժամանակն հեծեալ որսորդը կը ջանայ փղին մտադրութիւնը ձիուն վրայ դարձնել:

Փղին ջիղը կտրելու գործը շատ վտանգաւոր է եւ մեծ վարժութեան կարօտ. վարժ եւ ճարտար որսորդ մը եթէ իր սուրն աղէկ է, հասարակօրէն մէկ հարուածով ջիղն ամբողջ կը կտրէ, որով անասունն ալ յառաջ երթալու անկարող կ'ըլլայ եւ իր տեղը կը մնայ մինչեւ ուրիշ որսորդներն հոն գալով՝ զինքը նետերով ու նիզակներով կը վիրաւորեն ու կը սպաննեն:

Բարեյուսոյ դաղթականները որոյ տեղ հրացան կը գործածեն, եւ ասոր վտանգը շատ մեծ է որովհետեւ որսորդին հարկ է միշտ հետի երթալ, որով գիւրաւ փղերուն կատաղութեան կընան զհըլլալ: Փղորութեան զբաղող Հնդկներուօրէն միշտ կենաց վտանգի մէջ են, ու շատ քիչ են երկայն ժամանակ առ արուեստը կը վարեն առանց նոյն հսկայ չորքոտանիներէն վնաս կրելու կամ անոնց սիւն

նսձեւ ոտքերուն տակ ճմլուելու: Բայց առ ժողովուրդը շատ քաջամարտ եւ յանդուգն է եւ ամենեւին վտանգէ վախ չունի. առ պատճառաւ զբոսանաց համար փղորութեան գայող Էւրոպացիք ասոնցմէ մէկքանին իրենց հետ կը տանին: Մուտի անդղիացի պաշտօնականը հետեւեալ կերպով կը որսորդէր այսպիսի որսի մը պատահարները: Փրետերիքսպուրիի դաղթականութիւնն 1821 ղեւ նոր հաստատուած էր, եւ բոտ մեծի մասին անդղիական պաշտօնականներէ եւ իրենց ծառայութիւնը լմնցուցած ղեւ նուորներէ կը կազմուէր: Նոյն տարին ես ալ առ դաղթականութեան երկիրն եկայ եւ որոշեցի բնակութիւնս հոն հաստատել: Մեր հաստեղի ընկերները յաճախ անգամ փղորութիւն ըրած եւ առ անասուններէն շատ սպաննած էին: Իմ հասած օրէս քիչ մ'եղբը նորէն որսորդաց ընկերութիւն մը կազմուեցաւ փղերամակի մը դէմ երթալու համար՝ որ մեր բնակութեան մօտերն երեւցած էր: Անմիջապէս ես ալ ճամբայ ելայ որպէս զի նոյն ընկերութեան հետ միանամ եւ որսին մասնակից ըլլամ. սակայն անտառին մէջ մուրեկով՝ ան ժամանակն որսին տեղն հասայ երբ որ որսորդներն արդէն փղերամակն իր տեղէն հանած էին եւ կը հալածէին: Անտառէն դուրս արձակ տեղ մ'եղեւ լուս պէս ընկերներս ինձի «Աղէկ միտ դիր», պոռացին եւ մի եւ նոյն ժամանակ լսեցի ինձի մօտ եղող ծառի ոտքերուն շառաչելն, որմէ ետքը կատաղի փղաց բազմութիւն մ'անտառէն դուրս յարձակեցաւ. իրենց վարհուրելի ձայնը բոլոր դաշտը կը թնդացնէր:

Հաղթահառակ էգ փիղ մ'ուրիշ երեք փղաձաղերու ընկերութեամբ իրենց ընթացքն իմ կեցած տեղս ուղղած՝ յառաջ կու գային եւ ինձմէ հաղիւ 200 կանգուն հեռու էին, ուստի իմ բռնելու ընթացքիս վրայ երկայն խորհելու ժամանակ չունէի: Որովհետեւ պղտիկ դաշտի մը մէջ առանձին մնացած էի, յայտնի տեսայ որ եթէ հրացանս արձակեմ եւ գնդակն իր նպատակէն սխալի, անշուշտ փղերուն կատաղութեան պիտ'որ մատուցիմ: Ասոր համար սկսայ բոլոր գորութեամբ վազելով փախչել, կարծելով թէ փղերը ղիս տեսած չեն եւ կրնամ առանց վտանգի յարմար տեղ մը գտնել եւ անկէ ապահովութեամբ գնդակս իրենց վրայ արձակել: Սակայն չորքոտանի թշնամիներս արագ ընթացքով ինձի կը մօտենային, ալ ինձի ուրիշ ազատութեան միջոց չմնաց բայց եթէ մօտաւոր գետակին եզերքն ապաւինիլ եւ հոն ժայռերուն մէկ խոռոչին մէջ պահուիլ: Փղերն ինձի առ դորձքը գլուխ հանելու ժամանակ թող չտուին. հաղիւ թէ քանի մը քայլ դէպի գետակն յառաջացած էի, անոնք արդէն ինձի հասած էին. իմ եւ իրենց մէջ հաղիւ քսան քայլ միջոց կար: Ասով ստիպուեցայ զենքս գործածել. հրացանն էգ փղին գլուխն ուղղեցի եւ կրակ ըրի. սակայն գնդակն անոր մարմին վրայէն սահեցաւ անցան եւ ամենեւին վնաս մը չըրաւ: Անասունն արտաքոյ կարգի կատաղութեամբ սկսաւ յառաջ վազել եւ ես նոյն միջոցին գետինն ինկայ, անտարակոյս անոր պատճէն հարուած մ'ընդունելով՝ զորնոյն այլալու թեան մէջ ամենեւին չդգացի: Փիղն իր պատճովը ղիս մէջքէն բռնեց իր առջեւի ոտքերներուն առջեւը նետեց եւ քիչ մը ժամանակ ղիս անոնց մէջ առգին անդին մղեց. ետքն իր ոտքին մէկն այնպիսի զորութեամբ մը կուծքիս վրայ գրաւ, որ ոսկրներուս ճնշուիլն յայտնի զգացի. անգամ մ'ալ նոյն ոտակուութեամբ թեւէս վրայ կոխեց բայց բարեբախտութեամբ վնաս մը չկրեցի:

Սակայն այս ժամանակս միւս որոտողներէն երկու հոգի ինծի օգնութեան հասան եւ հրացանի հարուածով մը փիղը վերաւորելով՝ զանիկայ ստիպեցին զիս թող տալու։

Բոլորովին յետի մէջ թաթաւած եւ ամէն կողմն փղին տուած հարուածներովը չարաչար ցաւցուցած՝ հաղիւ կարող եղայ սողալով գետեզերքին ժայռերուն վրայ ելլել ուր իմ եղբայրս ալ քովս եկաւ։ Հոս աղէտալի գէպքի մը հանդիսատես եղանք։ Սաստիկ կատաղի արու փիղ մ'որոտողաց գնդին մէջէն անդղիական զինուորի մը ետեւէն հալածելով՝ մեր կեցած բլրոյն ստորոտն անոր հասաւ, պատճովը բռնեց քիչ մը հեռու տարաւ եւ հոն գետին նետելով՝ շորս օտուրներովը մէկտեղ անոր վրայ այնչափ ժամանակ կոխած կեցաւ մինչեւ որ խեղճ զինուորն հոգին փչեց։ Քիչ մը ժամանակ զիս թող տալէն ետքը, նորէն ետ դարձաւ իրեւ թէ անոր մեռած ըլլալն օտուրելու համար, եւ առջեւի ստուրներովը նորէն անոր վրայ կոխեց։ Ետքը պատճովը բռնեց տարաւ մինչեւ անտառին քովն եւ մասցառներուն մէջ նետեց։ Աս տեսիլը զիս շատ այլալայնց. ցաւերս բոլորովին մոռնալով՝ եղբօրս հետ բլրէն վար իջայ եւ երկուքինս մէկտեղ մեր հրացանները փղին վրայ արձակեցինք, բայց մեր տեղը շատ հեռու ըլլալով՝ չկրցանք անոր վնասել։

Քիչ մ'ետքը միւս որոտողներէն մէկուն արձակած մէկ հրացանի գնդակն այս սպանող փղին առջեւի ստուրներէն մէկն այնպէս վերաւորեց, որ ալ չկրցաւ յառաջ ելլալ։ Աս առթիւ փղերուն բնական սիրոյն եւ սրամտութեան մէկ շարժական օրինակը տեսանք։ Երբ որ եղ փիղն՝ իմ անձնական թշնամիս, իր ընկերին վտանգը տեսաւ, անմիջապէս իր ապաւինած մացառներէն դուրս ելաւ անոր վրայ յարձակող որոտողները վառնեց եւ իր մարմնովը վերաւոր արուին նեցուկ ըլլալով՝ զանիկայ կամաց կամաց գէպի անտառը տարաւ։ Աս հանդէսը կէս ժամու չափ շարունակեց մինչեւ որ ինքն ալ սաստիկ հարուած մ'ընդունելով գետին ինկաւ եւ շատ արիւն թափելէն ետքը մեռաւ։

Հնդկաց փղորոտութեան կերպը։

Որովհետեւ Ափրիկեցիք զփիղը միայն իր մօին եւ ակռային համար փորտան, զանիկայ ողջ բռնելու այնչափ չեն աշխատիր, այլ հասարակօրէն զէնքով կը սպաննեն։ Ասոր հակառակ Հնդկիները փիղը միայն բեռ կրելու, հեծնելու եւ պատերազմներու մէջ կը գործածեն, ուստի եւ զանիկայ միշտ ողջ կը բռնեն։

Իրենց փղորոտութեան գլխաւոր միջոցներն են Երազաղը (չուանէ որոգայթ) փոսի որոգայթն, Յցադարանն եւ ընտանեցած եգ փիղն, որուն օգնութեամբ վայրենի փղերն իրենց որջերէն կը հանեն եւ կը բռնեն։ Երազաղը որ մասնաւոր կերպով մը շինուած երկայն չուան մըն է, շատ քիչ եւ միայն փղածագ որսալու կը գործածուի։ Երեք որոտողք ընտանեցած փղերու վրայ հեծած, առանձին արածուող վայրենի փղի մը վրայ կ'երթան, զանիկայ կը պաշարեն եւ իրենց երազաղներովը կը սկսին պատել։ Հսկայ անտառնը մեծ ճիգ կ'ընէ եւ կը ջանայ զինքը կապող չուանները խզել, բայց պարտապ տեղ. որոտողք զինքն հասաւ ծառի մը կը կապեն եւ թող կու տան մինչեւ որ անօթիւ թիւնն իր վայրենութիւնն անցընէ. անկէ ետքը կը քակեն եւ ընտանի փղաց մէջ տուած՝ քաղաք կը տանին եւ կը սկսին կրթել։ Քանի մ'ամիս ետքն անտառնն իր տէրերուն կատարեալ կը հպատակի։

Փոսի դարանները՝ փղաբնակ տեղերուն մօտ փորուած ընդարձակ փոսեր են. որոտողներն ասոնց բերանը կանանչ ճիւղերով եւ խոտով կը ծածկեն եւ կը ջանան փղերը գէպի նոյն կողմը մղել անոնց արածուած դաշտերուն չոր խոտերուն կրակ տալով։ Փղերը բոցերէն դարհուրած՝ կը սկսին փախչիլ եւ փոսին մէջ կ'իյնան, ուր երկայն ժամանակ թող կը տրուին մինչեւ որ իրենց կատաղութիւնն անցնի եւ սկսին քաղց դգալ. ան ժամանակն որոտողները զինքն չուանով կը կապեն եւ փոսին մէջ հետզհետէ փայտի խրճեր կը նետեն, որոնց վրայ կ'ոխելով փղերը դարանէն դուրս կ'ելլեն։

Ընտանի եգ փղերով որսալը Հնդկաստանի քանի մը կողմերը փղորոտութեան մի միայն միջոցն է։ Որոտողներն անտառին մէջ պահուելէն ետքն հրապուրիչ փիղը թող կու տան որ ծառոց ճիւղերը բանալով կը սկսի գէպի արու փղի մը մօտենալ։ Ապրենի փիղն ալ կամաց կամաց գէպի իրեն կը մօտենայ, եւ կը սկսի պատճովը զանիկայ շղել։ Նոյն ժամանակն որոտողներն իրենց թաքստոցէն զգուշութեամբ դուրս կ'ելլեն եւ վայրենի փղին ստուրները չուաններով կը կապեն որուն երբեմն նաեւ նենգաւոր էգն օգնական կը լայ։ Անկէ ետքը գիւրաւ ուզած տեղերին կը տանին եւ կը սկսին ընտանեցընել։

Բուն Հնդկաստանի եւ Սէյլոն կղզոյն մէջ փղորոտութիւնն հասարակօրէն ցցադարանով կ'ընեն։ Աս դարանները մեծամեծ ցցերով երկու, երեք կարգ պատած ընդարձակ երբեմն մինչեւ 200 կանգուն երկայնութեամբ քառակուսի տեղեր են. որոնց մէջը հասարակօրէն մացառներ կամ ծառեր կը գտնուին։ Դարանին մէկ կողմը տառն սող լայն բաց տեղ թող կը տրուի՝ որուն առջեւը գետինը ցիցեր խոթելու համար պատրաստուած ծակեր կ'ունենայ, որպէս զի փղերը դարանին մէջ մտնելուն պէս պատրաստ ցիցերը նոյն ծակերուն մէջ խոթուին եւ անտառնը բոլորովին փակուի։ Այսպիսի դարաններն ան տեղերը կը շինուին ուր որ փղերամակի մը մօտաւորութիւնը կ'իմացուի։ Դարանը շինուելէն լընինալէն ետքն որոտողներն անոր բոլորաթիւր մեծ շրջանակ մը կը կազմեն՝ որ երբեմն մէկ ժամու ընդարձակութիւն կ'ունենայ, փղերամակն իրենց մէջ կ'առնուն եւ կամաց կամաց յառաջ երթալով՝ փղերը գէպի դարանին տեղը կը մղեն։ Եթէ երամակն որոտողաց շրջանակը խրամատել եւ անկէ դուրս ելլել ուզէ, ամէնը միաբան կը պոռան թմբուկ կը զարնեն, հրացան կ'արձակեն, կը սուլեն եւ ամէն կերպով դղողիւն կը հանեն, իսկ գիշերները ամէն տասը քայլ մէյմը կրակ կը վառեն։ Ասոնցմով փղերը կը զարհուրեն։ Որոտողք կամաց կամաց իրենց շրջանակը պղտիկցընելով վերջապէս երամակին մէկ մասը դարանին մէջ մտնելու կը ստիպեն, ցիցերն անմիջապէս մուտքին ծակերուն մէջ կը խոթեն եւ զանոնք բոլորովին կը փակեն։ Բռնուած փղերը դարանէն հանելու համար դարձեալ ընտանի փղեր կը գործածուին որոնց վրայ երկերկու որոտող հեծած՝ գաւառին մէջ կը մտնեն, վայրենիները չուաններով կը կապեն եւ իրենց կրթութեան տեղերը կը տանին։

Հնդկաստանի քանի մը գաւառները փղերն արտաւորուն եւ մանաւանդ սրիղի արտաւորուն մեծ վնաս կու տան, տոտը համար ժողովուրդը զանազ բոլորովին ջնջելու ետեւէ է եւ ամէն որոտողութեան ժամանակ շատ մարդիկ ինքնա կամ օգնելու կ'երթան։ Նաեւ կառավարութիւնն իւրաքանչիւր բռնուած փղի համար 10 տղերին կը վճարէ։

ԾԱԳԻՐ ՄԱՍԿՈՆԵՐԻՆ

Սյնգուստիկ (Syringa. Լեյլա)

Աս ծանօթ եւ անուշահոտ ծաղիկն երեք գլխաւոր տեսակ ունի, Ա. Ճինսիան Ս. (S. chinensis) Պարսկական Ս. (S. persica) եւ Հասարակ Ս. (S. vulgaris). Առաջին տեսակին ծաղիկը մանուշակագոյն է եւ մեծ ողկոյններով տրնկէն կը կախուի: Երկրորդ տեսակը 3—4 ոտնաչափ թուփ մըն է, նշտրակաձեւ տերեւ եւ լուրթ կարմիր ծաղիկ ունի՝ որ նոյնպէս ոտտերուն ծայրերը ողկոյններ կը կազմէ: Հասարակ Սյնգուստիկն՝ որ փոքր Ասիայէն Եւրոպա բերուած է եւ անոր հարուային կողմերը կը մշակուի, բարձր եւ երբեմն նաեւ ծառաձեւ թուփ մըն է: Մեծ, սրտաձեւ տերեւ եւ լուրթ կարմիր, կապոյտ ու ճերմակ անուշահոտ ծաղիկ ունի: Երեք տեսակն ալ պարարտ հող կը սիրեն եւ տալիսուռով (արմատէն բուսած պզտիկ ճիւղերով) կը բազմանան: Աս ծաղիկը մանաւանդ Պարսկականը նաեւ ձմերուան մէջ ծաղկեցնելու կը գործածուի. ասոր որոշուած մատաղ տնկերը տարի մը յառաջ միջակ մեծութեամբ ընձանակներու մէջ պէտք է տնկել, ընձանակը պարտեղին մէկ ամուսին մէջ թաղել եւ այնչափ ժամանակ հոն թողուլ մինչեւ որ տունկը բաւական արմատ տայ: Չմեռն աս տնկերը պաղէ ազատ տեղ մը պահելու է, եւ Փետրուարի կամ Մարտի մէջ տաք խցի մը պատուհանին առջեւ դնել: Տերեւները բացուելու սկսած ժամանակը տնկերուն վրայ յաճախ անգամ եղի ջուր պէտք է սրսկել եւ ծաղկելու սկսած տնկերը նորէն պաղ խցի մը մէջ պէտք է տանիլ:

ՍՆԵՐԱՆՈՒՐԷ ԵՒ ԶՈՒՍՐԺԱՆԷ

Երթնեկող ընդ:

Անցած տարի շոգեկառաց ածխասայլի մը մէջ ծիծռան (բերանի) բոյն մը գտնուեցաւ որուն մէջ չորս ձագեր կային: Սայլն երկայն ժամանակ կայարանին մէկ կողմը թող տրուած էր եւ ծիծռան իր բոյնն անոր մէկ անկիւնը դրած հաւկիթներն ածած ու ձագերն հանած էր, որոնք արդէն բաւական փետրաւորուած էին: Վերջապէս հարկ եղաւ աս սայլը գործածել եւ շոգեկառքի չուր մը կապել: Ձագերուն ծնողը սայլին հետ 30 միոն ընկերացան եւ ձամբան անդադար զանոնք կերակրեցին մինչեւ որ չուրն իր որոշեալ տեղը հասաւ: Աս կերպով երկու շաբաթ իրենց ձագերը կրող սայլին հետ երթեալ եւ երկու ժամը զանոնք դարմանեցին մինչեւ որ թռչնիկները կատարեալ փետրաւորուելով՝ իրենց ծնողաց հետ բոյնէն թռան:

Մանկական դողոց ընկերութիւն մը:

Աս օրերս Վիեննայի արգարութեան ատեանը նորակերպ գողոց ընկերութեան մը դատաստանն ըրաւ որ 16 անդամներէ կը բաղկանար. ասոնք առհասարակ 13 մինչեւ 16 տարուան տղաք էին՝ զանազան արուեստի աշակերտներ, որոնք իրարու հետ դաշնակցութիւն մ'ըրած՝ քաղքին զանազան կողմերը մեծ եւ պզտիկ գողութիւններ կ'ընէին եւ իրենց մէջ կը բաժնէին: Ընկերութեան կազմուելէն մինչեւ իր ոստիկանութեան ձեռքն ինչպէս 4 ամիս անցած էր, եւ այնչափ ժամանակուան մէջ 90 գողութիւն ըրին եւ 1000 Ֆիորինի վաճառք ձեռք ձգեցին:

Ընկերութիւնը զանազան դատ բաժնուած էր, որոնց իւրաքանչիւրը մէկմէկ մասնաւոր գործք ունէր: Գողակցութեան ամենէն պզտիկ անդամն որ դեռ հազիւ 13 տարուան էր, իր փաստկար գործունէութեամբն եւ ճարտարմտութեամբն ընկերութեան առաջնորդն եղած էր. ամէն գողութիւն ընկելու տեղերը նախ ինքն անձամբ կը քննէր, տեղւոյն հանգամանքն ու դիրքն աղէկ կը դիտէր եւ ետքն իր գործակիցները կը խրկէր որ իրենց արուեստն ի գործ դնեն: Իսկ վտանգաւոր եւ դժուարին տեղեր ինքն անձամբ կ'երթար:

Գատաստանն իրենց դատը քննելէն ետքն ամէն մէկուն մասնակցութեան եւ հասակին համեմատ զերեւը 6—12 ամսուան խիստ բանտարկութեան դատապարտեց: Իսկզբան բոլոր դատաստանական գործողութիւններն եւ բազմութեան ըրած մտադրութիւնն աս մանկահասակ գողոց հաճութիւն մը կը պատճառէր, եւ ամէն անհոգութիւն եւ անտարբերութիւն մը կը ցուցնէին. բայց երբ որ պատժոյն վճիռը արուեստաւ եւ մանաւանդ երբ որ իրենց ծնողքն եւ եղբայրներն արտասուալից աչքը իրենց քովը տեսնան, ան ժամանակ նաեւ իրենց աչքերն սկսան արտասուք թափել:

Վեհալուծական պատասխան:

Պարտից Տուգրիլ Թագաւորին Հայաստան արշաւած ժամանակն հայ նախարարներէն ոմանք Կարուց Գագիկ Թագաւորին հետ միաջանած՝ անոր դէմ էլան: Ասոնց մէջ էր նաեւ Թաթուլ Վանանդացի քաջ իշխանն որ հայ իշխանաց շատերուն ինչպէս ետքը գերի բռնուած Տուգրիլին տարուեցաւ: Եւ որովհետեւ Թաթուլ նոյն պատերազմին մէջ Արսուրան պարսիկ իշխանին որդին՝ Տուգրիլին սիրելին վերաւորած էր, Թագաւորն ըսաւ իրեն. «Եթէ պատանին առողջանայ, զքեզ ալ կ'ազատեմ, իսկ եթէ մեռնի զքեզ անոր զոհ կ'ընեմ»:

Վանանդացին վեհալուծութեամբ մը պատասխանեց, «Եթէ իմ է հարուածն չէ կենաց, (Եթէ զարնուածքն իմն է, չապրի): Իրք պատանին քիչ մ'ետքը մեռաւ. Տուգրիլ Թաթուլն ալ սպաննել տալով՝ աջ բազուկը կտրեց եւ Արսուրանին խրկեց ըսելով՝ «Որդիդ վատ բազկէ մեռած չէ»:

Առատ կաթ բերող կով:

Չարաճիին մէկը գիշեր ատեն կաթնալաճառի մը մօտէնալով՝ որ անկողինն մէջ հանդիստ կը քնանար, անոր պուռաց «Բարեկամ, ամենէն ընտիր եւ առատ կաթ տուող կովդ խղճուելու վտանգի մէջ է»: Անմիջապէս վեր ցատքեց անկողնէն պլայլած կաթնալաճառն եւ փութաց իր անասնոյն օգնութեան հանել, սակայն զանիկայ ողջ առողջ գտաւ. միայն տեսաւ որ կովանոցին առջեւի աղբիւրը լաթի կտորով մը գոցուած էր:

Արուեստագետ մկուռ:

Հէգդըն Անգղիացին երկու մկեր կըթած է՝ որոնք պղծտիկ մեքենայով մը բամբակէ դերձան կը շինեն. աս անասնիկներէն ամէն մէկն օրը 100—120 թէկ կը գործէ եւ իրենց աս գործքը կատարելու համար ըրած ձամբան երկու գերմանական միոն (չորս ժամու ձամբայ) է: Հէգդըն կը խորհի 10,000 այսպիսի արուեստաւոր մկերու համար մեքենաներ շինել տալ, որով ըստ իր հաշուին տարին 5000 սղերին շահ պիտ'որ ընէ:

Մոմի ծառ:

Գարունայի մէջ Բուրլ կամ Վալէ անուամբ ծառ մը կը բուսնի որուն պտուղը ջրի մէջ եփուելով՝ մեղուաց շինած մեմին նման հիւթ մը դուրս կու տայ: Տեղացիք աս հիւթը ջրին վրայէն կը ժողվին եւ անկէ կերտն կը թափեն, որ չէ թէ միայն պայծառ լոյս մ'ունի այլ նաեւ հաճոյական հոտ մ'ալ կը բուրէ:

Խոյնազարդութիւն Միսիթսրէսն:

ՎԱԶՆՆԵՐ

Միսիթսրէսն տայսրսն: